## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 80

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.11.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայքի ավագանու 09.11.2016թ թիվ 14 նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղական համայնքի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին:
3. Լճաշեն համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու մասին:
4. Գեղարքունիքի մարզի Լճաշենի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի, պաշտոնային դրույքաչափերի մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 81-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 3-դ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Լճաշեն համայնքի 2016թվականի տեղական բյուջեում կարտարել հետևյալ փոփոխությունները.

1. Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բաժին 01, խումբ 1 դաս 1 ծրագիր 5 Ներքին գործուղում հոդված 4221-ից 100.0 հազար դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հոդված 4239-ից 156.0 հազար դրամ, Այլ հարկեր հոդված 4822-ից 200.0 հազար դրամ, գյուղատնտեսություն բաժին 04, խումբ 2 դաս 1, ծրագիր 51 մասնագիտացված ծառայություն հոդված 4241-ից 200.0 հազար դրամ, սուբսիդիա հոդված 4521-ից 200.0 հազար դրամ: Հանգիստ և սպորտի ծառայություն բաժին 08 խումբ 1 դաս 1 ծրագիր 51 ներքին գործուղումներ հոդված 4221-ից 50.0 հազար դրամ մասնագիտացված ծառայություն հոդված 4241-ից 200.0 հազար դրամ, համայնքի պահուստային ֆոնդ բաժին 11 խումբ 1 դաս 2 ծրագիր 51 պահուստային ֆոնդ հոդված 4891-ից 1044.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51 տեղեկատվական ծառայության հոդված 4234-ին

100.0 հազար դրամ և հաստատել 322.0 հազար դրամ ներկայացուցչական ծախսեր հոդված 4237-ին 550.0 հազար դրամ և հաստատել 1750.0 հազար դրամ կենցաղային և հանրային սնունդ հոդված 4267-ին 150.0 հազար դրամ և հաստատել 700.0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութեր հոդված 4269-ին 1000.0 հազար դրամ և հաստատել 2302.0 հազար դրամ: Սոցիալապես հատուկ արտոնություններ /այլ դասին չպատկանող/ բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 51 հոդված 4729-ին 350.0 հազար դրամ և հաստատել 6150.0 հազար դրամ:

2. Համայնքի Ֆոնդային բյուջեի հանգիստ և սպորտ ծառայություններից բաժին 08 խումբ 1 դաս 1 ծրագիր 51 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդված 5113-ից 450.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51 գովազդային վահանակների ձեռք բերում հոդված 5132-ին 450.0 հազար դրամ և հաստատել 450.0 հազար դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 82-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ, $11^{1}$ կետի և 11-րդ հոդվածի պահանջներով. ***ավագանին որոշում է՝***

Հաստատել 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբեկտների համար

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ:

2/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20000 դրամ,

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար 25000 դրամ,

գ/ 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար մինչև 35000 դրամ

դ/ 3001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ մինչև 75000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 3000 դրամ

ա/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար 3000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1700 դրամ

գ. 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1700 դրամ

գ. 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ

4. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 30 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 75000 դրամ:

3/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվությանհամար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 15000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

2/ դատարկ գովազդային վահանակի համար 250 դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ 1000 դրամ:

8. Նոտարական ծառայություններ կատարելու , նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի պատճենները հանելու և դրանց քաղվածքներ տալու համար՝ 500 դրամ, կտակը հաստատելու համար 2000 դրամ:

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:

10 ՏԻՄ տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 100 դրամ:

11. ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և անուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի հատուցման համար` մասնակիցների վճար 1000 դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ
8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**Համայնքի ղեկավար`** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 83

## ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի, 43-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 6-րդ հոդվածի, 28-րդ հոդվածի II բաժնի 1-ին կետի գ ենթակետի , <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետի , 18-րդ հոդվածի 4-րդ կետի, և հիմք ընդունելով համայնքի ավագանու կանոնակարգը 24-րդ կետի, ավագանու 20.01.2016թ թիվ 3-Նորոշման դրույթները, ավագանին որոշում է՝

1. Հաշվի առնելով, որ Լճաշեն գյուղի բնակիչներ Հայրապետյան Անահիտի, Մարգարյան Իսկուհու, Մարգարյան Ռուդիկի, Մանուկյան Թուխիկի, Սիմոնյան Նորիկի, Աբրահամյան Էմմայի ընտանիքները գտնվում են սոցիալական ծանր պայմաններում, ուստի համայնքի վարչական բյուջեի Այլ նպաստների պահպանման ծախսերի բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 51 հոդված 4729 հատկացնել 270.0 հազար դրամ դրամական օգնություն.

- Հայրապետյան Անահիտին - 50000 դրամ
- Մարգարյան Իսկուհուն - 50000 դրամ
- Մարգարյան Ռուդիկին - 50000 դրամ
- Մանուկյան Թուխիկին - 30000 դրամ
- Սիմոնյան Նորիկին - 40000 դրամ
- Աբրահամյան Էմմային - 50000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**Համայնքի ղեկավար՝** ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 84

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 28 հոդվածի, 31 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Անփոփոխ թողնել Գեղարքունիքի մարզի Լճաշենի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**